ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

Ե 40/6 - 3554
«25» 06 20 24 թ.

«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՍԱՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 00524412
ՀՀ, ք. Երևան, Երկաթուղայիններ 4 փ., 2/4
Հեռ. +374 98 81 56 65
ԷԼ. ՓՈՍՏ llaaimport@yandex.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 19.03.2024թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 3.864.997,2 ՀՀ դրամ: Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների խախտումներ, մասնավորապես.

Ըստ պայմանագրի, «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 2024թ.-ի մայիսի 31-ը մատակարարել թվով 5 չափաբաժիններով ապրանքներ՝

1. կոնֆերենց համակարգ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի համար,
2. ձայնային հեռարձակման համակարգ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի համար,
3. ձայնային հեռարձակման համակարգ ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի համար,
4. Պրոյեկտոր ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի համար

5. Աթոռներ ղեկավարի՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի համար

Վերը շված ապրանքներից մատակարարվել են միայն «Պրոյեկտոր» և «Աթոռներ» չափաբաժիններով նախատեսված ապրանքները, ընդ որում «Պրեյկտոր» ապրանքը մատակարարվել է ժամկետի խախտմամբ, իսկ մնացած ապրանքներն ընդհանրապես չեն մատակարարվել:

06.06.2024 թ. թիվ Ե40/6-3209 գրությամբ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին տեղեկացվել է առ այն, որ վերը նշված ապրանքները ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանը անհրաժեշտ են պայմանագրով սահմանված ժամկետներում և առաջարկվել է սեղմ ժամկետում՝ մինչև 20.06.2024թ.-ը ներառյալ մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

24.06.2024թ. դրությամբ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են միայն «Պրոյեկտոր» և «Աթոռներ» չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների էական խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2024թ.-ի հունիսի 25-ին, միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի միջև 19.03.2024թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով պայմանագիրը՝ <u>2.524.998 (երկու միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր իննսունութ)</u> ՀՀ դրամ գումարի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե կատարողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 252.500 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման

ապահովման գումարը կազմում է 378.750 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ.-ի հուլիսի 2-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 252.500 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 378.750 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ընդհանուր 631.250 ՀՀ դրամ, ապա «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ.-ի հուլիսի 2-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ

Կատարող՝ Տ.Վարդանյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ԿԱ բաժնի պետ,
Հեռ.՝ 060-37-90--90